ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 485-Ա 14 օգոստոսի 2026 թ.

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշման 9-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջներն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի հուլիսի 25-ի N 712-Ա հրամանը և Սիմոն Մանուկյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանին տրամադրել 2025-2026 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մի մասը՝ 2026 թվականի օգոստոսի 17-ից 2026 թվականի սեպտեմբերի 4-ը ներառյալ (15 աշխատանքային օր):

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրան կփոխարինի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանին՝ արձակուրդի ժամանակահատվածում բացակայելու վերաբերյալ համապատասխան փոփոխությունը կատարել Mulberry 2.0 էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի դրվածքներ բաժնում:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

5. Սիմոն Մանուկյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի սեպտեմբերի 5-ից:

14.08.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք.Գավառ